ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4534-Ա « 15 » սեպտեմբերի 2026 թ.

ՋՐԱՇԵՆԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ.11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Մարտիկ Թովմասյանի լ/ա Գևորգ Թովմասյանի դիմումը՝ Ջրաշենի 2-րդ փողոցի հ.11 հասցեում գտնվող (տնամերձ) հողամասի սահմանները ճշտելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել «Հայաստանի Ազգային Արխիվ» ՊՈԱԿ-ի 2024 թվականի ապրիլի 8-ի հ.2663 տեղեկանքը, ՀՀ կադաստրի կոմիտեի Կ-22122025-01-0073 որոշումը և հ.ԱՏ-10032026-01-1179 տեղեկանքը, Էրեբունի վարչական շրջանի թիվ 26 տեղամասի լիազոր ներկայացուցչի կողմից տրված տեղեկանքը և վերջինիս կողմից հաստատված հարևանների հայտարարությունները և «Տիգրան Փոթիկյան» ԱՁ-ի կողմից տրամադրված հողամասի տեղագրական հանույթը:

Համաձայն ներկայացված տեղագրական հանույթի Ջրաշենի 2-րդ փողոցի հ.11 հասցեի տնամերձ հողամասի փաստացի մակերեսը կազմում է 1500,0քմ, որքան ամրագրված է «Հայաստանի Ազգային Արխիվ» ՊՈԱԿ-ի 2024 թվականի ապրիլի 8-ի հ. 2663 տեղեկանքում և ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում, գտնվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի հողերի տարածագնահատման 11-րդ գոտում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտա-րապետության և քաղաքաշինության վարչության հ. Դ-41062-26 եզրակացությունը.

1. Սահմանել, որ Ջրաշենի 2-րդ փողոցի հ.11 հասցեում գտնվող (տնամերձ) 1500քմ մակերեսով հողամասի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեում:

3. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ